ԿԱՍՊՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հայկ Գաբրիելյան

ԽՍՀՄ փլուզումից հետո Կասպից ծովի հյուսիսային ափերին ի հայտ եկած չորս անկախ ու ինքնիշխան պետությունների՝ Ռուսաստանի, Ղազախստանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի սեփական շահերը, պետական հետաքրքրությունները կասպյան նավթի շուրջ ոչ միշտ էին համընկնում: Այդպես առաջացավ Կասպիցի բաժանման դեռևս չլուծված՝ նավթի (գազի) զգալի պաշարներ ունեցող շելֆի յուրացման խնդիրը: Կասպյան հին «խաղացողներից» մեկն է նաև Իրանը, որ ԽՍՀՄ-ի օրոք չէր արտահայտել Կասպից ծովի 1/5-ին տիրելու իր ցանկության մասին: Կասպից ծովում Իրանը երբեք ձեռնոց չի նետել ԽՍՀՄ-ին՝ հասկանալով այդ քայլի անհեռանկարայնությունը: Իրանն այդ քայլը կատարելու հնարավորություն չի էլ ունեցել, քանի որ խորհրդա-իրանական պայմանագրի համաձայն՝ զրկված էր Կասպից ծովում ռազմածովային նավատորմ ունենալու իրավունքից, և նրա բոլոր ռազմածովային հնարավորություններն այստեղ եղել և մնում են բավական պայմանական: Ուստի, Ռուսաստանը Կասպիցի տարածքում հիմնական դերակատարն է մնում՝ չնայած նրա ներկայությունը վերջին տարիներին զգալի ձևափոխումներ է կրում:

Կասպիցում նախկին ԽՍՀՄ-ից Ռուսաստանին որպես ժառանգություն բաժին հասավ Կասպյան նավատորմիղը, իհարկե, առանց նախկին ենթակառույցների և ռազմանավերի մի մասի, որոնք անցան Ադրբեջանին: Մյուս պետությունները նման ժառանգություն չստացան:

Նավատորմը քաղաքականության գործիք է, իսկ Ռուսաստանի քաղաքականությունը տարածաշրջանում կապված է կասպյան եզակի ռեսուրսների, առաջին հերթին՝ նավթի (նաև գազի) հետ: Հյուսիսային շելֆում ռուս երկրաբանները հետախուզել են ռազմավարական հումքի մինչև 2 միլիարդ տոննա պաշարներ: Երկրորդ ռեսուրսը ձուկն է (Աստրախանում մեկ շնչին բաժին են ընկնում երկրի ամենաշատ թվով կարթերը): Կասպիցի նավթն ու գազը կարծես երկրորդ պլան են մղել ձկնային պաշարները, թեև եթե համեմատենք խավիարի ու նավթի մեկ տոննայի գները, ապա համեմատությունն ակնհայտորեն վերջինիս օգտին չի լինի: Փաստորեն, ով Կասպիցում կորցնի նավատորմը, արդյունքում՝ կզրկվի նաև նավ-

թից ու ձկից: Դա քաջ գիտակցում են բոլորը, հետևաբար՝ Կասպիցում ոչ ոք չի պատրաստվում զինաթափվել:

Ռուսաստանը տարածաշրջանում ներկայացված է Կասպյան նավատորմիղով: Երկրի նախագահ-գլխավոր հրամանատարը և պաշտպանության նախարարը կանոնավորապես այցելում և հատուկ ուշադրություն են դարձնում նավատորմիղի մարտունակության, ինչպես նաև մյուս նախարարությունների ու գերատեսչությունների հետ համագործակցության հարցերին՝ մի շարք խնդիրներ (ահաբեկչություն, որսագողություն, թմրաբիզնես, ապօրինի զենքի առևտուր, էներգետիկ անվտանգություն) լուծելու նպատակով:

Կասպյան նավատորմիղը կարևորագույն դեր ունի տարածաշրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի ապահովման գործում: Կասպյան տարածաշրջանում, ըստ Ռուսաստանի, խոշոր մասշտաբի պատերազմի վտանգ գոյություն չունի, բայց առկա են այլ հիմնախնդիրներ, որոնք պետք է լուծվեն մերձկասպյան բոլոր երկրների հետ համատեղ: Մերձկասպյան տարածաշրջանում առանձին երկրների հետ արդեն ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք պետք է զարգացնել[1]:

1992թ. խորհրդային Կասպյան նավատորմիղը բաժանվեց 4 հավասար մասի (յուրաքանչյուրին՝ 25%): Ղազախստանն ու Թուրքմենստանն անմիջապես, հօգուտ Ռուսաստանի, հրաժարվեցին իրենց բաժնեմասից: Սակայն Ադրբեջանն այդպես չվարվեց: Եվ փաստորեն Ռուսաստանին բաժին հասավ ռազմանավերի 75%-ը: Բաժանումից հետո Ռուսաստանի Կասպյան նավատորմիղը, խորհրդայինի համեմատ, կորցրեց 18 ռազմանավ, 62 օժանդակ նավ, 3 հենակետ և մարտական նախապատրաստության 18 շրջան: Ռուսական ռազմանավերը և օժանդակ նավերը Բաքվից տեղափոխվեցին Աստրախան և Մախաչկալա: Կասպյան նավատորմիղի գլխավոր ռազմակայանը դարձավ Աստրախանը: Մյուս կարևոր ռազմածովային կայանը Մախաչկալան է: Աստրախանում նավատորմիղի հիմնական ուժերի տեղակայումից սկսած՝ հիմք դրվեց Կասպյան նավատորմիղի զարգացման նոր փուլին[2]: 2002թ. հուլիսին նավատորմիղը համալրվեց «Թաթարստան» (1166 նախագիծ, «Հեպարդ») հրթիռակիր նավով: Այն նավատորմիղի ֆլագմանն է և ունի հզոր հրթիռահրետանային սպառազինություն. հականավային հրթիռային համալիրներ՝ արձակման 2 սարքով և ունիվերսալ, հարվածային «Ուրան» հրթիռներով (հեռահարությունը՝ մինչև 350 կիլոմետր), «Սոսնա-Ռ» ղեկավարվող հրթիռներով զինված զենիթահրթիռային

[1] http://www.lenta.ru/news, July 7, 2005

[2] http://www.day.az, October 31, 2003

համալիրներ, փոքր ու միջին տրամաչափի հրետանային սպառազինություն, հակասուզանավային տորպեդային ապարատներ: «Թաթարստանն» ունի նաև տորպեդների հայտնաբերման ու ոչնչացման հատուկ սարքավորում, ինչպես նաև հիդրոակուստիկական ճնշման համակարգեր: Անձնակազմը բաղկացած է 103 հոգուց, ջրատարողությունը 1930 տոննա է (այլ տվյալներով՝ 2100 տոննա), արագությունը՝ 28 հանգույց, երկարությունը՝ 102 մետր, նավարկության տևողությունը՝ 30 օր: Նավն ունի թռիչքի հարթակ, ինչը նախատեսված է «Կա-28» կամ «Կա-31» ուղղաթիռների մշտական բազավորման համար: Ռազմանավը նախատեսված է օդային, վերջրյա ու ստորջրյա թիրախների որոնման, հայտնաբերման ու ոչնչացման համար: Նման ռազմանավի հայտնվելը Կասպիցում, ըստ անկախ փորձագետների, տարածաշրջանում ռազմածովային ուժերի հարաբերակցության նժարը զգալիորեն թեքել է Ռուսաստանի օգտին[1]:

Այդ կարգի հերթական նավը՝ «Դաղստանը», ռուսական Կասպյան նավատորմիղը պետք է համալրի այս տարի (սակայն ֆինանսական պատճառներով դա կարող է հետաձգվել 1.5 տարով): Նավն իր որակական և սպառազինական հզորությամբ գերազանցելու է «Թաթարստանին»: Հատկանշական է, որ այս ռազմանավերը կառուցվել են հատուկ Կասպիայի ծանծաղ պայմաններում նավարկելու համար: Հետագայում նախատեսվում է նաև Կասպյան նավատորմիղը համալրել «Բույան» փոքր հրետանավերով: Դրանց ջրատարողությունը 500 տոննա է, արագությունը՝ 28 հանգույց, լողալու հեռավորությունը՝ 1500 մղոն: Մինչև 2010թ. ծրագրված է կառուցել այդպիսի 5 ռազմանավ[2]:

2006թ. հուլիսին նավատորմիղը համալրվեց 21630 նախագծի («Բույան») «Աստրախան» ռազմանավով, որի կառուցման ժամանակ առաջին անգամ օգտագործվել է «սթելս» տեխնոլոգիան: Այն ունի կորպուսի և հրետանային համակարգերի հատուկ կառուցվածք, ինչը հայտնաբերման տարբեր տիպի տեղորոշիչ համակարգերի համար նավը դարձնում է քիչ նկատելի: Ռազմանավը կարելի է սպառազինել ամենատարբեր հրետանային համակարգերով: Կասպյան նավատորմիղի գլխավոր հրամանատար Վլադիմիր Մասորինի տեղեկացմամբ՝ հաջորդ երկու հրետանավերը, որոնք կհամալրեն Կասպյան նավատորմիղը, կկոչվեն «Կասպիյսկ» և «Մախաչկալա»[3]:

Հիմնական դժվարությունը, սակայն, այն էր, որ սարքավորված ծովային բոլոր հրաձգարանները մնացել են Ադրբեջանի մոտակայքում: Այդ պատճառով էլ ռուսական կողմը ստիպված է եղել վերականգնել առափնյա

[1] http://www.TatNews.ru, July 11, 2002
[2] http://www.lenta.ru/news, July 7, 2005
[3] http://www.gzt.ru, October 7, 2005

հետազոտման և կապի ամբողջ համակարգը: Այժմ այդ դժվարությունները վերացվել են:

Կասպիցում աշխատանքներ են տարվում նաև ռուսական պաշտպանական գծերը կատարելագործելու ուղղությամբ: Կասպիյսկում կենտրոնացած ծովային հետևակի 77-րդ բրիգադի դիվիզիոններից մեկը 2004թ. սպառազինվել է նոր հրետանային սարքավորումներով, իսկ 2005-2007թթ. ընկած ժամանակահատվածում ռուսական ծովային հետևակի ստորաբաժանումների անձնակազմը կհասցվի պրոֆեսիոնալ մակարդակի: Նրանք այլևս չեն ուղարկվի Չեչնիա և ամբողջովին կկենտրոնանան իրենց մարտունակության բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ, առափնյա շրջաններում ուժեղացվում են սահմանապահ զորքերը: 2004թ. դեկտեմբերի սկզբին Հյուսիսային Կովկասում սահմանապահ ենթակառույցների ամրացման մասին նախագահական հրամանագրով Կասպիցի շրջանում կբացվեն լրացուցիչ (10 միավորից ավելի) սահմանապահ ուղեկալներ և պարետատներ, որոնք նույնպես ամբողջովին կհամալրվեն պայմանագրային զինծառայողներով: Անվտանգության դաշնային ուժերի սահմանապահ զորքերի ջրային շրջանի պաշտպանության բրիգադը նույնպես կհամալրվի փոքր և միջին մոտորանավակներով, որոնք ռուսական առափնյա շրջանի ջրատարածությունում կարող են նախազգուշացնել յուրաքանչյուր ծովային օբյեկտի առաջխաղացման մասին:

Ինչ վերաբերում է սահմանապահ ռազմանավերին, ապա դրանք նույնպես կարելի է համարել Կասպիցում ամենաուժեղ սահմանապահ ուժերը: Անվտանգության դաշնային ուժերի ծովային զորամասերի ՊՍԿՌ–500 «Սոկժոյ» (14230 նախագիծ) պահականավի արագությունը մինչև 100 կմ/ժ է, ջրատարողությունը՝ մինչև 100 տոննա, անձնակազմը՝ 12-16 մարդ, ծովագնացությունը՝ մինչև 6 բալ, հագեցած է հրետանային և հրաձգային սպառազինությամբ, ռադիոտեղորոշիչ, կապի միջոցներով և զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանվածության համակարգով[1]:

2003թ. Կասպյան նավատորմիղը համալրվեց «Օռլյոնոկ» և «Լուն» էկրանոպլաններով՝ ծովային ինքնաթիռներով: Որևէ այլ պետություն, նավատորմիղի շտաբի հաղորդման համաձայն, նման ինքնաթիռներ չունի: «Օռլյոնոկ» էկրանոպլանը նախատեսված է անձնակազմի ու տեխնիկայի փոխադրման համար: Ինքնաթիռն ի վիճակի է մեծ հեռավորություններ փոխադրել 150-ից ավելի զինծառայող՝ իրենց հաստիքային սպառազինությամբ հանդերձ, կամ երկու զրահափոխադրիչ մեքենա և կամ դեսանտի երկու մարտական մեքենա: «Լուն» էկրանոպլանը հագեցած է «օդ-մակերևույթ» կարգի հրթիռների արձակման սարքերով և նախատեսված է, նա-

[1] http://www.ng.ru, December 12, 2004

վատորմի մյուս ուժերի հետ համագործակցությամբ, հակառակորդի ռազմածովային ուժերի ավիակիրների բազմանշանակ կամ հարվածային խմբավորման ոչնչացման համար:

Էկրանոպլանների թռիչքի արագությունը մինչև 600 կմ/ժ է, հեռավորությունը՝ մինչև 1500 կիլոմետր, թռիչքի առավելագույն բարձրությունը՝ մինչև 400 մետր, նվազագույնը՝ 1 մետր: Առավելագույն ցածր բարձրությամբ թռչելու ունակության շնորհիվ էկրանոպլանը գործնականում անտեսանելի է դառնում ամենաժամանակակից ռադիոտեղորոշիչ միջոցների համար[1]:

2006թ. Կասպյան նավատորմիղը համալրվեց «Էդոմոգայ» հիդրոգրաֆիկական նավով, որն ի վիճակի է հիդրոգրաֆիկական աշխատանքներ իրականացնել ինչպես գետում, այնպես էլ ծովում: Դա նավատորմիղի սպառազինության մեջ հայտնված առաջին հիդրոգրաֆիկական նավն է վերջին 15 տարիների ընթացքում: Այն ի վիճակի է մինչև 500 մետր խորության վրա հատակի ռելիեֆի եռաչափ նկարահանումներ իրականացնել[2]:

Փաստորեն, այսօրվա դրությամբ Կասպյան նավատորմիղի կազմի մեջ մտնում են հրթիռային նավեր, հրթիռային, տորպեդային և հրետանային մոտորանավակներ, դեսանտային նավեր ու էկրանոպլաններ, ինքնաթիռ-ամֆիբիաներ (ցամաքի և ջրի վրա իջնող օդանավ), պարեկային ուղղաթիռներ, մարտական և երթային տրալերներ, ծովային հետևակի զորամասեր, հրթիռահրետանային, կապի, հետազոտման, հետախուզական, թիկունքային և այլ ստորաբաժանումներ: Կասպյան նավատորմիղի նավերի ընդհանուր թվաքանակը, ներառյալ ռազմական մոտորանավակները, ըստ չճշտված աղբյուրների, կազմում է 100 ռազմանավ, անձնակազմը՝ 20.000 մարդ: Նավերի համակազմը համալրվում է հիմնականում Բալթյան նավատորմի և նոր կառուցված նավերի հաշվին: Կասպյան նավատորմիղի կազմի մեջ են մտել նաև նախկինում Սևծովյան նավատորմի գետային նավերի Իզմայիլյան բրիգադի զրահային մոտորանավակները:

Կասպյան նավերը հարձակողական զենքով սպառազինելու փաստը վկայում է այն մասին, որ Մոսկվան մտադիր է տարածաշրջանում իր շահերը պաշտպանել ոչ միայն պաշտպանական մեթոդներով, այլ նաև սարսափեցնող զենքով՝ քիչ նկատելի թևավոր հրթիռներով, որոնք, բացի ռազմանավերից, ի վիճակի են ոչնչացնել նաև հակառակորդի առափնյա ենթակառույցները[3]:

Կասպյան նավատորմի հզորացման փուլը, փաստորեն, կապված էր տարածաշրջանում ամերիկյան ռազմաքաղաքական ներթափանցման հետ:

[1] http://www.inauka.ru, August 22, 2003
[2] http://www.interfax.ru, April 28, 2006
[3] http://www.vesti7.ru, October 6, 2005

Դրա հետ կապված՝ Կասպյան նավատորմիղի հզորացման խնդիրը Ռուսաստանի համար, մյուս նավատորմերի համեմատ, դարձավ առաջնահերթ, և դա այն դեպքում, երբ Կասպյան նավատորմիղից բացի, Ռուսաստանն ունի երկու օվկիանոսային (Խաղաղօվկիանոսյան ու Հյուսիսային) և երկու ծովային (Բալթյան ու Սևծովյան) նավատորմեր, որոնք ցայժմ հետին պլանում էին թողել Կասպյան նավատորմիղը: Դա բացատրվում է նրանով, որ վերոնշյալ չորս նավատորմերի համեմատ՝ ռազմական առումով ամենաթույլը Կասպյան նավատորմիղն է, որին երբեք այդքան կարևոր դեր չի հատկացվել, որքան այսօր: Ներկայումս Կասպյան նավատորմիղն իր կրակային հզորությամբ Կասպիցում չունի իրեն հավասարը և մոտ ապագայում չի ունենա՝ չնայած նրան, որ մերձկասպյան մյուս երկրները նույնպես սկսել են մեծ ուշադրություն դարձնել իրենց ռազմածովային ուժերի հզորացմանը: Կրակային հզորությամբ առաջ անցնելով այդ երկրների նավատորմերից՝ Ռուսաստանը ձգտելու է բարելավել Կասպյան նավատորմիղի մանևրային հնարավորությունները:

Ներկայումս Կասպիցի իրավական կարգավիճակի խնդիրը մտել է երրորդ փուլ: Առաջին փուլն ընդգրկում էր 1991-1994թթ. ընկած ժամանակահատվածը. դա երկկողմ և բազմակողմ հանդիպումների փուլն էր, երբ սկսվեց խնդրի ուսումնասիրությունը: Երկրորդ փուլը ներառում է 1995-1998թթ. ընկած ժամանակահատվածը, երբ Կասպիցի կարգավիճակի հարցում հստակ ձևավորվեցին մերձկասպյան պետությունների դիրքորոշումները, ինտենսիվացան երկկողմ ու բազմակողմ հանդիպումները: Երրորդ փուլն սկսվեց 1999թ., երբ ձեռք բերվեցին երկկողմ համաձայնություններ Կասպիցի իրավական կարգավիճակի հարցում[1]:

ՄԱԿ կոնվենցիայի համաձայն՝ տարածքային ջրեր (տարածքային ծով) անվան տակ հասկացվում է որոշակի լայնությամբ ծովային շերտ, որը սահմանակից է ափամերձ պետության ափերին, կղզիներին ու ներքին ջրերին, որոնք գտնվում են նրա սուվերենության ներքո: Ստացվում է, որ տարածքային ջրերն ափամերձ պետության տարածքի անքակտելի մասն են կազմում: Դրա համար էլ դրանցում գտնվող նավերը ենթարկվում են տվյալ պետության իշխանությանը, նրա հաստատած կարգուկանոնին: Այս ամենը չի վերաբերում տարածքային ջրերի միայն մակերևույթին ու հատակին: Այն հավասարապես վերաբերում է նաև տարածքային ջրերի օդային տարածքին, ինչը նույնպես գտնվում է ափամերձ պետության սուվերենության ներքո և կազմում է նրա անքակտելի մասը: Տարածքային ջրերի սահմաններից դուրս գտնվող ջրատարածությունը համարվում է բաց ծով: Կոնվենցիայում «բաց ծով» հասկացությունը ներառում է ծովի բոլոր այն մասե-

[1] http://www.analitika.az, January 25, 2005

ը, որոնք չեն մտնում ո՛չ տարածքային ծովի, ո՛չ որևէ պետության ներքին ջրերի մեջ: «Բաց ծով»-ի միջազգային իրավական ռեժիմի սկզբունքներից մեկն այն է, որ այն բաց է բոլոր ազգերի համար, և որ ոչ մի պետություն իրավունք չունի հավակնել նրա որևէ հատված իր սուվերենությանը ենթարկելու համար: Դա նշանակում է, որ «բաց ծով»-ը չի մտնում որևէ պետության տարածքի մեջ, ոչ մի պետություն չի կարող իր իրավասությունը տարածել նրա վրա, և բոլոր պետությունները «բաց ծով»-ում օգտվում են բացառապես հավասար պայմաններից:

ՄԱԿ կոնվենցիայում ասվում է, որ երկու կամ ավելի պետությունների տարածքներով շրջապատված ծովը, եթե ելք չունի դեպի «բաց ծով» (Համաշխարհային օվկիանոս), ապա այն ներկայացնում է ափամերձ պետությունների ներքին ազգային ջրեր՝ պետական սահմանների շրջանակներում: Ելնելով այս սահմանումից՝ Կասպիցը պետք է դիտարկել որպես սահմանային լիճ: Պետք է նշել, որ լիճն իրավական տեսակետից չունի այնպիսի կատեգորիաներ, որպիսիք են տնտեսական գոտիները, շելֆերը, տարածքային ջրերը: Լիճը վերագրվում է ներքին ջրերի կարգին՝ ափամերձ պետությունների սուվերեն տարածքներին, և դրա վրա չեն տարածվում միջազգային ռեժիմները:

Կասպիցը ծով չէ, այն գտնվում է Համաշխարհային օվկիանոսից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա: Բացի այդ, Կասպիցի մակարդակը միջինը 28 մետրով ցածր է Համաշխարհային օվկիանոսից: Այս ամենից հետևում է, որ Կասպիցն աշխարհագրական ու իրավաբանական առումներով ծով չէ: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն հետագայում չի կարող ծովի կարգավիճակ ստանալ: Եթե դա տեղի ունենա, ապա կասպյան յուրաքանչյուր երկիր սուվերեն իրավունքներ ձեռք կբերի 12 մղոնանոց տարածքային ջրերի (մայրցամաքային շելֆ) և 200 մղոնանոց բացառապես տնտեսական գոտու վրա: Քանի որ Կասպիցի առավելագույն լայնությունը չի գերազանցում 200 ծովային մղոնը, բացառապես տնտեսական գոտու արտաքին սահմանները պետք է որոշվեն միջին գծի սկզբունքի հիման վրա: Այսինքն՝ Կասպիցի բաժանումն անհրաժեշտ է իրականացնել հյուսիսից հարավ[1]:

Միջին գծի սկզբունքի հաստատման դեպքում Ռուսաստանին բաժին է ընկնում Կասպիցի տարածքի 18.7%-ը, Ղազախստանին՝ 29.6%-ը, Ադրբեջանին՝ 19.5%-ը, Թուրքմենստանին՝ 18.4%-ը, Իրանին՝ 13.8%-ը: Սրանից հետևում է, որ այս դեպքում «բաց ծով» ընդհանրապես չի լինի, քանի որ յուրաքանչյուր կասպյան պետության իրավասությունը կտարածվի նրան բաժին ընկած տարածության վրա: Դա բացասաբար չի ազդի առևտրային

[1] http://www.rau.su, August 12, 2004

նավագնացության վրա, քանի որ յուրաքանչյուր նավ օգտվելու է խաղաղ անցման իրավունքից: Այս պարագայում կարելի է զուգահեռներ անցկացնել ներքին Ճապոնական ծովի հետ, որն ամբողջությամբ գտնվում է Ճապոնիայի իրավասության ներքո, այսինքն՝ համարվում է նրա սեփական տարածքը, սակայն դա չի խանգարում, որ այդտեղ լողան ողջ աշխարհի դրոշներն ունեցող նավերը:

Մոտավորապես նման տոկոսային հարաբերությամբ են բաժանվում նավթային պաշարները: Իսկ ինչու մոտավորապես: Որովհետև նավթահանքերի ծավալները մինչև վերջ չեն հետախուզվել: Ռուսաստանին ու Իրանին, որոնց տարածքային ջրերը պարունակում են առավել քիչ քանակությամբ նավթի պաշարներ, բնականաբար, նման մոտեցումը չի բավարարում: Դրա համար էլ նրանք առաջարկում են Կասպից ծովը որպես լիճ ճանաչել: Այդ դեպքում արդեն այն, համաձայն միջազգային կանոնադրության, կհանդիսանա բոլոր մերձկասպյան երկրների ընդհանուր սեփականությունը: Եվ ահա այս ժամանակ բոլոր հետախուզական աշխատանքները պետք է համաձայնեցվեն յուրաքանչյուր խաղընկերոջ հետ: Նման որոշումը, իհարկե, անհրաժեշտ չէ մյուս երեք երկրներին, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած կարող է նկատելի դեր խաղալ նավթային շուկայում:

Հետաքրքրական է, որ դեռևս 1970թ. ԽՍՀՄ նավթարդյունաբերության նախարարության կողմից իրականացվում էր ազգային սեկտորների հիման վրա Կասպիցի բաժանման պրակտիկան: Համաձայն այդ բաժանման՝ Ադրբեջանին բաժին էր հասնում Կասպից ծովի տարածքի մոտ 70.000 կմ^2, Թուրքմենստանին՝ 80.000 կմ^2, Ռուսաստանին՝ 60.000 կմ^2, Ղազախստանին՝ 105.000 կմ^2 և Իրանին՝ 55.000 կմ^2: Այդ ժամանակ պաշտոնական Թեհրանը Կասպիցի այդպիսի բաժանման հարցում որևէ դժգոհություն չէր արտահայտել:

Սահմանային լճերի սահմանազատումը կարող է տեղի ունենալ միայն բոլոր ափամերձ պետությունների փոխադարձ համաձայնության դեպքում: Սահմանային լճերի բաժանումն ու շահագործման պայմանները կանոնակարգվում են համապատասխան պայմանագրերով: Սակայն գոյություն ունեն լճեր, որոնց սահմանազատումն արդեն տեղի է ունեցել, բայց դրանց օգտագործման ռեժիմներն առավել հաճախ համընդհանուր ձևով են իրականացվում՝ առանց ջրատարածության սահմանազատման: Այդպիսի լճերից են Չադը (Կամերուն-Չադ-Նիգերիա-Նիգեր), Մեծ լճերը (ԱՄՆ-Կանադա), Վիկտորիան (Քենիա, Ուգանդա, Տանզանիա), Կոնստանսը (Ավստրիա, Գերմանիա, Շվեյցարիա) և այլն:

Սահմանային լճերի շուրջ միջպետական հարաբերությունների պրակտիկայում գոյություն ունի միջին գծի երկու ձև՝ աշխարհագրական միջին գիծ և մոտավոր (պայմանական) միջին գիծ: Աշխարհագրական մի-

ջին գիծը կիրառվում է այն լճերի նկատմամբ, որոնք ունեն ափերի սխալ ուրվագծեր, և միջին է համարվում այն գիծը, որը հավասար հեռավորության վրա է գտնվում այն կետից կամ կետերից, որոնք առավել մոտ են հանդիպակաց ափերին: Օրինակ՝ Տանգանիկան, Մեռյալ ծովը, Մալավիի լճերը և այլն: Սակայն իրականում առավել գործածական է պայմանական միջին գիծը, ինչը կիրառվում է աշխարհագրական և այլ բնույթի բարդությունների առկայության դեպքում (կղզիների կամ թերակղզիների, նավարկելի ջրանցքների առկայություն, ռելիեֆ, որոնք դժվարացնում են միջին գծի անցկացման պլանի կազմումը): Այլ կերպ ասած, երբ առաջանում է միջին գծի ճշգրտման անհրաժեշտություն, լճամերձ երկրները հանգում են փոխզիջումային տարբերակի: Նման կերպ են վարվել Ալբերտ, Տիտիկակա, Մեծ լճերի պարագայում:

Կասպից ծովը՝ որպես աշխարհում ամենամեծ սահմանային լիճ, պատկանում է անորոշ սահմաններ ունեցող ջրային օբյեկտների կարգին: Դրա համար էլ անհրաժեշտ է, որպեսզի կողմերը, նկատի ունենալով նախադեպերը, գտնեն լճի սահմանների որոշման փոխզիջումային մոդելը: Կարելի է փաստել, որ լճի կարգավիճակը չի բացառում Կասպիցի՝ ազգային սեկտորների բաժանման հնարավորությունը: Սակայն այն ամենևին էլ չի պարտադրում ափամերձ պետություններին վարվել համանման կերպ: Աշխարհում լճերի մի մասը բաժանված է ազգային սեկտորների հիման վրա, մյուս մասը՝ ոչ: Նույնը կարելի է ասել Կասպիցի՝ ծովի կարգավիճակ ստանալու պարագայում:

Ռուսաստանը Կասպից ծովը համարում է լիճ, որը բոլոր կողմերից շրջապատված է ցամաքով, մեկուսացված է միջազգային ջրերից, ծովերից ու օվկիանոսներից: Եթե Կասպիցը ծով համարվի, ապա նրա վրա պետք է տարածվեն 1982թ. ծովային կոնվենցիայի դրույթները, համաձայն որոնց՝ ծովային հանքավայրերը պատկանում են ափամերձ պետություններին, և որոնցից յուրաքանչյուրը մենատիրաբար շահագործում է այն հանքավայրերը, որոնք պատկանում են նրան: Ռուսաստանը դեմ է Կասպիցին ծովի կարգավիճակ տալուն, քանի որ այդ դեպքում Վոլգա-Դոն և Վոլգա-Բալթիկ ջրանցքները, որոնք համարվում են ներքին ռուսական ջրավազաններ, պետք է դառնան միջազգային ջրեր, իսկ դա լրջորեն հակասում է Ռուսաստանի շահերին ու անվտանգության խնդիրներին: Փաստորեն, Կասպիցը որպես լիճ դիտարկելով՝ Ռուսաստանն այստեղ կանխում է միջազգային ծովային իրավունքի տարածումը: Ռուսաստանը գտնում է, որ Կասպիցի հատակի ռեսուրսները պետք է օգտագործվեն մերձկասպյան բոլոր երկրների ընդհանուր համաձայնության հիման վրա:

Հարկ է նշել, որ գետերն ու ջրանցքները միջազգային ծովային իրավունքի օբյեկտներ չեն հանդիսանում: Դրա համար էլ ջրատարածություն-

ները չեն կարող վերածվել ծովի:

Ռուսաստանը դեմ է Կասպիցի՝ ազգային սեկտորների ու ազգային ձկնային գոտիների բաժանմանը: Այս հարցում, բնականաբար, իրենց ազդեցությունն են թողնում ռազմաքաղաքական գործոնները, քանի որ խախտվում է ազատ նավարկության սկզբունքը: Իսկ դա նշանակում է, որ հնարավորություն է ստեղծվում Կասպիցում ոչ կասպյան պետությունների դրոշներ ունեցող ռազմանավերի ներկայության համար: Ռուսաստանը համաձայն է Կասպիցի՝ ազգային սեկտորների հիման վրա բաժանմանը միայն հատակի մասով:

Մի շարք հարցերից (ներքին ջրերով նավերի տարանցման վերահսկողություն, երրորդ երկրների սահմանափակ ռազմական ներկայություն) բացի, Ռուսաստանն առաջ է քաշում նաև բնապահպանության հարցը՝ որպես փոխադարձ վերահսկողության լրացուցիչ միջոց և, հետևաբար, սահմանափակ տնտեսական գործունեություն ծովում: Խոսքը ծովային խողովակաշարերի մասին է, որոնց շուրջ համաձայնությունը, ըստ ռուսական կողմի առաջարկի, պետք է լինի մերձկասպյան բոլոր երկրների, այլ ոչ թե միայն այն երկրի գործը, որի տարածքով անցնում են դրանք:

Այժմ Կասպից ծովի կարգավիճակը կանոնակարգվում է ՌՍՖՍՀ-ի ու Պարսկաստանի միջև 1921թ. փետրվարի 26-ին ու ԽՍՀՄ-ի ու Իրանի միջև 1940թ. մարտի 25-ին կնքված պայմանագրերով: Դրանց համաձայն՝ Կասպիցում հաստատվել էին ազատ նավարկություն ու ձկնորսություն, բացառությամբ ափամերձ 10 մղոնանոց գոտուց, արգելվել էր ոչ կասպյան երկրների դրոշներ ունեցող նավերի երթևեկը: Բացի այդ, Կասպիցը համարվել էր ԽՍՀՄ-ի ու Իրանի սեփականությունը:

Ջրատարածության հարցում (տնտեսական գործունեություն մակերևույթին և ձկնորսություն) Մոսկվան ելնում է համընդհանուր օգտագործման սկզբունքից, բացառությամբ 15 մղոնանոց ազգային գոտու: 15 մղոնի սահմաններից դուրս ձկնորսությունը պետք է շարունակվի ընդհանուր կանոնների ու քվոտաների հիման վրա, որոնք կմշակվեն կոնսենսուսային հենքի վրա[1]:

Այսպիսով, Կասպիցի իրավական կարգավիճակի (թե՛ որպես լիճ, թե՛ որպես ծով) որոշմանը, ռեսուրսային ու տարածքային բաժանմանը հասնելու համար անհրաժեշտ է մերձկասպյան բոլոր հինգ երկրների համաձայնությունը: Ռուսաստանին է պատկանում Կասպիցում մերձկասպյան 5 պետությունների (Ռուսաստան, Թուրքմենստան, Ղազախստան, Ադրբեջան և Իրան) արագ արձագանքման բազմազգ ռազմածովային ուժերի ստեղծման նախաձեռնությունը *(«Casfor»):* Հատկանշական է, որ Ռուսաստանը դրա մասին հայտարարեց այն բանից հետո, երբ Կասպյան տարածաշրջա-

[1] http://www.forums.dumaem.ru, February 7, 2006.

նում ստեղծեց ամենահզոր ռազմածովային խմբավորումը (2005): ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի խոսքերով՝ Ռուսաստանը Կասպյան տարածաշրջանում իր գործընկերների հետ համագործակցության կարիք ունի: Նրա կարծիքով՝ ժամանակակից վտանգների դեմ ավելի լավ է դիմակայել համընդհանուր ուժերով: Կասպիցում պետք է կարգուկանոն հաստատեն այն պետությունները, որոնք սահմանակից են նրան և ոչ թե ինչ-որ ոչ տարածաշրջանային ուժեր: Հասկանալի է, որ այդ ուժերի անվան տակ նախարարը նկատի ունի առաջին հերթին ԱՄՆ-ին և Հյուսիսատլանտյան բլոկի նրա դաշնակիցներին: Այս հարցում Ռուսաստանին, բնականաբար, աջակցում է Իրանը:

Հեռանկարում Ռուսաստանը ցանկանում է ստեղծել ՆԱՏՕ-ի՝ բալթյան *(«Baltops»)* և սևծովյան *(«Blackseafor»)* օպերատիվ միավորների նման մի բան: Դրանք ստեղծվել են ամերիկացիների նախաձեռնությամբ: Կասպյան խմբավորումն *(«Casfor»)* ունենալու է նմանատիպ նպատակներ, որպիսիք հետապնդում են ամերիկացիները. պայքար ահաբեկչության, թմրաբիզնեսի դեմ, տարածաշրջանային անվտանգության ամրապնդում: Սակայն իրականում խոսքը տարածաշրջանում ռազմածովային դաշինքի մասին է: Վերոնշյալ բոլոր առաջադրանքներն ամբողջովին իրագործվում են մերձկասպյան երկրների առափնյա պաշտպանության ծովային ուժերի կողմից: 2003թ. զինավարժություններին ռուսական նավաստիների հետ համատեղ մասնակցեց Ղազախստանի ավիացիան: Երկարատև «սառը հարաբերություններից» հետո մանևրներ իրականացվեցին Ադրբեջանի նավաստիների հետ, ինչը, հասկանալի է, բավական ոչ միանշանակ ռեակցիա առաջացրեց Թեհրանում: Այդ միջազգային ռազմածովային ուժերի հետագա համագործակցության հեռանկարը բավական մշուշապատ է: Ավելին, դրանց պահպանումն ավելի շուտ կընկնի Ռուսաստանի ռազմական բյուջեի վրա, եթե, իհարկե, կողմերը համաձայնության հասնեն: Ռազմածովային ուժերի աճի մասին չի հրապարակվում, սակայն տարածաշրջանի բոլոր երկրները նախանձելի համառությամբ ձեռնամուխ են եղել դրան:

«Casfor»-ի մասին ռուսական առաջարկը չի հակասում կողմերի ստացած ռազմական օգնությանը, սակայն փակում է դռները երրորդ ուժերի առջև: 2005թ. հուլիսին Աստրախանում տեղի ունեցավ մերձկասպյան երկրների ներկայացուցիչների կոնֆերանսը, ուր Մոսկվան առաջադրեց օպերատիվ խմբի առաջադրանքների ու նրա գործունեության սկզբունքների իր տեսակետը: Հոկտեմբերին ուղարկվեց համաձայնության նախագիծը: Սակայն «Կասֆոր»-ի նախաձեռնությունն այդպես էլ անհրաժեշտ ազդեցություն չստացավ: Առայժմ *«Casfor»-ի* ստեղծմանը կողմնակից են միայն Իրանն ու Ղազախստանը, իսկ Ադրբեջանի ու Թուրքմենստանի պարագայում բանակցությունները շարունակվում են:

Եթե Կասպյան երկրներն ընդունեն *«Casfor»-ի* վերաբերյալ ռուսական առաջարկը, ապա Ռուսաստանը դրա համար պատրաստ է էժան գներով ռազմական տեխնիկա վաճառել *«Casfor»-ի* երկրներին: Հասկանալի է, որ այդ նախաձեռնությունը Մոսկվային կօգնի հեշտությամբ լեզու գտնել նոր դաշինքի երկրների հետ, որոնց նավատորմերը կոչված են վերահսկելու ռազմավարական առումով կարևոր տարածաշրջանը: Սակայն այդ ուղղությամբ Ռուսաստանը դեռ շատ ջանքեր պիտի գործադրի: Ադրբեջանը չի ցանկանում մասնակցել *«Casfor»-ին* Ղարաբաղյան հակամարտության հարցում Ռուսաստանի բռնած դիրքորոշման պատճառով (Մոսկվան առաջարկում է հայերի ու ադրբեջանցիների միջև տեղակայել ռուս խաղաղապահների): Թուրքմենստանը նույնպես համաձայն չէ միջին գծի սկզբունքին և ցանկանում է տիրել Կասպիցի հատակի 20%-ին:

Այսօր *«Casfor»-ի* ծրագրերի մեջ է մտնում կասպյան բոլոր երկրների նավատորմերի կազմում օպերատիվ խմբավորումներ կազմավորելու հարցը: Որքանո՞վ է դա իրական: Ակնհայտ է, որ Ռուսաստանի Կասպյան նավատորմիղի «հավասարամեծ ընկերությունը» տարածաշրջանային այլ ռազմածովային ուժերի հետ առայժմ անհնար է: Իրանը, չնայած բոլոր հավակնություններին, մնում է ռազմական համագործակցության սեղմ շրջանակում, իսկ առաջիկա գործողությունների հեռանկարներն այդ հնարավորությունն առավել իրատեսական չեն դարձնում: Թուրքմենստանը դուրս է եկել ԱՊՀ կազմից և չի մասնակցում ռազմական գործողությունների՝ պահպանելով սկզբունքային չեզոքություն: Ադրբեջանի ու Ղազախստանի նավատորմերը կազմավորման փուլում են: Գոյություն ունեն մի շարք այլ հարցեր ևս. Կասպիցին ափամերձ հինգ երկրներից ո՞ր մեկը ԶՈԶ ունի, այդ հինգ երկրներն արդյոք իսկապես ունե՞ն ընդհանուր տնտեսական շահեր, որոնք նրանք կցանկանային պաշտպանել, ո՞րն է վտանգը, ո՞ր երկրի բանակը պետք է գերիշխող դիրք գրավի խմբավորման կազմում՝ հաշվի առնելով, որ որոշ ափամերձ երկրներ գրեթե ռազմածովային ուժեր չունեն: Պարզապես *«Casfor»-ի* վերաբերյալ ռուսական առաջարկն ուղղված է նրան, որ Կասպից ծովի ավազանից հեռացվեն «օտար» պետությունները, և ամրապնդվի Մոսկվայի ազդեցությունը[1]:

Ներկայումս Ռուսաստանը հիմնականում անհանգստացած է օտարերկրյա ընկերությունների՝ Կասպից ծով գնալով աճող ներթափանցումից: Միայն անգլիացիներն ու ամերիկացիներն ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով տիրում են Կասպիցի նավթային պաշարների 27 և գազային պաշարների 40%-ին:

Մերձկասպյան խոշոր տերություններից մեկը լինելով՝ Ռուսաստանը պաշտոնապես վարում է տարածաշրջանի ապառազմականացման քաղա-

[1] http://www.forums.dumaem.ru, February 7, 2006

քականություն: Մոսկվան դեմ է Կասպից ծովում մերձկասպյան երկրների ռազմական ներուժի հզորացմանը և տարածաշրջանում ոչ կասպյան երկրների ներկայությանը:

Կարելի է կարծել, թե տարածաշրջանում ԱՄՆ ներկայությունը Ռուսաստանի համար դրական ազդեցություն կարող է ունենալ երկու պատճառներով.

1. Տարածաշրջանում ԱՄՆ ներկայությունը խափանում է այնտեղ ծայրահեղական իսլամի մուտքը, որն այսօրվա դրությամբ սպառնում է ոչ միայն Չեչնիային ու Դաղստանին, այլև Ռուսաստանի ներքին շրջաններին:
2. ԱՄՆ-ը կարող է դառնալ Չինաստանի հզոր հակակշիռը, որը Ռուսաստանի համար ռազմավարական առումով առավել վտանգավոր է՝ հաշվի առնելով Սիբիրում և Հեռավոր Արևելքում երկրի թուլությունը[1]:

Այսպիսով, Ռուսաստանի համար այսօր շատ մեծ կարևորություն է ստանում Կասպիցում ամերիկյան և ընդհանրապես ոչ կասպյան երկրների դրոշ ունեցող նավերի պարեկության կանխարգելումը:

Հունիս, 2007թ.

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ РОССИЙСКОГО ПРИСУТСТВИЯ В КАСПИЙСКОМ БАССЕЙНЕ

Айк Габриелян

Резюме

Современное мировое сообщество разделено на государственные образования с несовпадающими целями развития: на высокоразвитые и слаборазвитые, богатые и бедные. Неравенство в распределении материальных ценностей между ними ошеломляет. Высокоразвитым странам, где проживает 25% мирового населения (около одного миллиарда человек – «золотой миллиард»), принадлежит 80-85% мирового богатства, а на долю остальных 75% мирового населения (около пяти миллиардов человек) приходится только 15-20%.

И богатым, и бедным вдруг стало ясно, что жить так, как высокоразвитые страны, потребляющие более 80% ресурсов, весь мир никогда не смо-

[1] http://www.day.az, October 31, 2003

жет. На Земле просто нет таких ресурсов. Это озарение резко углубило политическое, экономическое, экологическое противостояние между «золотым миллиардом» и остальным миром. И нет ничего удивительного и противоестественного в том, что и те и другие защищают свои интересы как могут. Для защиты своих интересов страны «золотого миллиарда» создали и экономический союз – Организация экономического сотрудничества и развития (ОЭСР), и военно-политический союз – Организация североатлантического договора (НАТО). В условиях надвигающего ресурсного кризиса Запад поставил перед собой две задачи: задача №1 – получить контроль над ресурсоемкими районами планеты, задача №2 – ограничить доступ слаборазвитых стран к высоким технологиям. Очевидно, что в обозримом будущем развитые страны будут ориентироваться на сырьевые ресурсы слаборазвитых стран, жестко блокируя их попытки развивать свою собственную промышленность. Ясно также, что экономическое благополучие развитых стран в третьем тысячелетии, а возможно и в четвертом, во многом обеспечат минеральные ресурсы постсоветского пространства.

Отголоски мирового противостояния дошли и до берегов Каспия – здесь разыгрывается третий по объему нефтяной резервуар планеты, который, по оценкам западных аналитических центров, в XXI веке станет основным поставщиком углеводородного сырья на мировой рынок. Каспийское море – уникальный водоем, его углеводородные ресурсы и биологические богатства не имеют аналогов. Не зря в последнее десятилетие внимание мировой общественности, народов постсоветских государств приковано к проблемам Каспия. Эти проблемы в концентрированном виде отражают сложные противоречия, вызванные глобальным геополитическим сдвигом в этом районе: развалом Советского Союза и возникновением новых независимых государств.

Достаточно четко обозначилось и противостояние между прикаспийскими государствами: на начальном этапе Россия, Туркменистан и Иран оказались на одной стороне баррикады, Азербайджан и Казахстан – на другой. С большой долей уверенности можно утверждать также, что противостояние между прикаспийскими государствами-членами СНГ преднамеренно стимулируется заинтересованными внешними силами: за каждой прикаспийской страной шеренгой (у кого больше, у кого меньше) выстроились иностранные нефтяные компании.

В статье приводится фактологический материал по анализу соотношения сил прикаспийских государств, «трубопроводной» политики прикаспийских государств, значения энергоресурсов Каспийского региона на мировых рынках. Анализируется проблема определения политико-правового статуса Каспийского моря.